Կարծիք

Անահիտ Գառնիկի Այվազյանի

«Իրավունքի սուբյեկտի էությունը և ժամանակակից մոտեցումները.տեսական-իրավական վերլուծություն» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Հրապարակային պաշտպանության ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը նվիրված է իրավունքի տեսության և, ընդհանրապես իրավագիտության առավել արդիական ու միաժամանակ բարդ ու խնդրահարույց խնդիրներից մեկի՝ իրավունքի սուբյեկտի ուսումնասիրությանը:

Գրախոսվող ատենախոսության թեմայի արդիականությունն, առաջին հերթին, պայմանավորված է Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգի ժողովրդավարական բարեփոխումների հետ կապված տեսական և գործնական խնդիրների համարժեք ու արդյունավետ լուծումներ գտնելու անհրաժեշտությամբ:

Իրավական պետության կառուցումը և իրավակարգավորումների արդյունավետության բարձրացումը միաժամանակ նշանակում է կտրուկ շրջադարձ դեպի այդ գործընթացների մասնակիցների՝ իրավունքի սուբյեկտների հասկացության, բովանդակության համակողմանի բացահայտման խնդիրների գիտական հետազոտմանը:

Հեղինակը լիարժեքորեն է օգտագործել մասնագիտական գրականությունը և նորմատիվ նյութը, ինչը հնարավորություն է տվել նրան լիովիվ բացահայտել թեմայի էությունն ու բովանադակությունը: Դրան նպաստել է նաև հեղինակի ուրույն մեթոդաբանական գործիքակազմի օգտագործումը, մասնավորապես՝ ինտեգրատիվ մեթոդաբանությունը, ինչի շնորհիվ հեղինակը հաջողությամբ հաղթահարել է հետազոտության պոզիտիվ շարադրանքի միակողմանիությունը և քննարկվող հիմնախնդիրը լուծել է իրավական այլ կատեգորիաների համակողմանի վերլուծության համատեքստում:

Նման սկզբունքային մոտեցումը կանխորոշել է ատենախոսության բովանդակության պահանջվող գիտական խորությունը և հնարավորություն է ընձեռել

հեղինակին հանգելու տեսական և գործնական նշանակություն ունեցող հետևությունների և եզրակացությունների:

Քննարկվող աշխատանքի նպատակն է, որպեսզի գիտականորեն հիմնավորվի իրավունքի սուբյեկտի ընդհանուր տեսական-մեթոդաբանական հիմքերը և հեղինակային հայեցակարգային մոտեցումները:

Նշված նպատակին հասնելու համար հեղինակը իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- բացահայտել իրավունքի սուբյեկտի ընդհանուր հասկացությունը և առանձնահատկությունները,
- բացահայտել իրավասուբյեկտություն կատեգորիայի իրավաբանական բովանդակությունը և կառուցվածքային տարրերը,
- սահմանել իրավունքի սուբյեկտների դասակարգման հիմքերը,
- վերլուծել անհատի՝ որպես իրավունքի սուբյեկտի հասկացությունը և բովանդակությունը,
- վերհանել իրավաբանական անձի նորմատիվ-իրավական էությունը և բովանդակային առանձնահատկությունները,
-սահմանել պետության՝ որպես իրավունքի սուբյեկտի յուրահատկությունները:

Գրախոսվող ատենախոսության բովանդակության ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ հեղինակը, պատշաճ գիտական խորությամբ է լուծել իր առջև դրված խնդիրները, իսկ վերլուծության արդյունքների հիման վրա ձևակերպել է տեսական և գործնական նշանակություն ունեցող եզրակացություններ ու առաջարկություններ:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ մենագրության մակարդակով հեղինակը ձեռնարկել է իրավունքի սուբյեկտի խնդրի համալիր, բազմակողմանի վերլուծություն, իրականացել է քննական վերլուծություն՝ իրավունքի ընդհանուր տեսության և ճյուղային իրավաբանական գիտությունների դոկտրինալ մոտեցումները իրավունքի սուբյեկտի վերաբերյալ և ստացված արդյունքների հիման վրա մշակվել է իրավունքի սուբյեկտի հեղինակային հայեցակարգային մոտեցումը:

Հեղինակն իրավացիորեն գտնում է, որ իրավունքը գոյություն չունի առանց սուբյեկտի, այն իրենից ներկայացնում է ստեղծագործության արդյունք: Իրավական

նորմերը, իրավահարաբերությունները ամբողջ իրավական կատեգորիաները գործադրվում են իրավունքի սուբյեկտի շուրջ և վերջինիս միջոցով, սուբյեկտի գիտակցական կամքով՝ բոլորի համար ընդհանուր չափով ու ծավալով:

Հեղինակի կողմից իրականացված հետազոտության արդյունքում վերաիմաստավորվում են ավանդական մոտեցումները իրավունքի սուբյեկտի մասին, առաջարկվում են նոր գաղափարներ և առաջարկներ, իրավունքի սուբյեկտի տեսական և գործնական հատկանիշների վերաբերյալ:

Ընդհանուր առնմամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը ինչ-որ չափով ուսումնասիրության առարկա դարձներ նաև իրավունքի սուբյեկտի առանձնահատկությունները իրավունքի առանձին ճյուղերի իրավակարգավորումների ոլորտում:

Երկրորդ, հեղինակը իրավական անձի կերպարում իրավացիորեն դիտարկում է բանական էակին՝ մարդուն: Սակայն, մեր կարծիքով, հարկ էր վերլուծել նաև այն հանգամանքը, որ իրավունքի ցանկացած սուբյեկտի՝ իրավաբանական անձի, պետության պարագայում նույնպես տեսանելի է բանական էակի՝ մարդու անմիջական կամ միջնորդավորված ներկայությունը, չէ՞ որ նշված սուբյեկտների գիտակցական գործունեությունը իրավակարգավորումների ոլորտում իրականացնում են որոշակի տարիքի հասած ֆիզիկական անձինք՝ իրավաբանական անձի կամ պետության անունից: Հետևաբար կարելի է ենթադրել, որ իրավաբանական անձը կամ պետությունը, մեր կարծիքով, ոչ միայն ֆիկտիվ, այլև, այսպես կոչված, «խառնածին» սուբյեկտներ են, որոնց ներկայացուցիչները (ֆիզիկական անձինք) տվյալ պարագայում իրավունքի սուբյեկտ չեն, սակայն կատարում են իրավունքի սուբյեկտի լիազորված դերակատարում, առանց որոնց բուն սուբյեկտները (իրավաբանական անձինք, պետությունը) օբյեկտիվ պատճառով չեն կարող հանդես գալ որպես սուբյեկտ իրավակարգավորումների ոլորտում:Այսինքն՝ մարդկային գործոնը միշտ ներկա է ոչ միայն ֆիզիկական անձի, այլև իրավաբանական անձի և պետության պարագայում:

Սակայն վերոնշված դատողությունները որևէ կերպ չեն կարող նսեմացնել կատարված դրական աշխատանքի արժանիքները:

Աշխատանքի թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրած մասնագիտության թվանիշին:

Սեղմագրում և հեղինակի կողմից հրատարակված աշխատանքներում լիովին արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Ելնելով որոշարադրյալից, գտնում ենք, որ Անահիտ Գառնիկի Այվազյանի «Իրավունքի սուբյեկտի էությունը և ժամանակակից մոտեցումները.տեսական-իրավական վերլուծություն» թեմայով թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական ու ավարտուն հետազոտություն է, իսկ նրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
«Հայբուսակ» համալսարանի
«Իրավագիտության և միջազգային
հարաբերությունների ինստիտուտի» տնօրեն,
իրավաբանական գիտությունների թեկնածու **Լ.Մ.Մալխասյան**

Լ.Մ.Մալխասյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի «Հայբուսակ» համալսարանի գիտքարտուղար՝ **Տ.Պետրոսյան**